նա գործածւում մեր լեզուում եւ թէ՝ իւրաքանչիւր առումից ի՞նչ ոճեր են կազմւում:

Այսպէս, նախ եւ առաջ տրուած է ակն բառի հիմնական նշանակութիւնը, որ է՝ աչք: Դրան հետեւում են նոյն բառի օգնութեամբ կազմուած բազմաթիւ ոճեր՝ իրենց բացատրութիւններով մէկտեղ. ինչպէս՝ յակն անկանել, նշ. է «երեւալ», յակն արկանել — «ցոյց տալ», զակն արկանել — «երես դարձնել», յակն առնուլ — «սիրել», ակն ածել — «պատկառիլ», ակն առնուլ — «աչառել», ակն դնել — «աչք տնկել, ցանկանալ», յակն գալ — «երեւալ», ակն տալ — «նայիլ, դիտել»: Եւ այսպէս, մի քանի ուրիշ ոճեր եւս, կազմուած նոյն ակն բառի օգնութեամբ:

Ապա՝ հետեւում են այդ բառի օգնութեամբ կազմուած բարդութիւններ, բայեր, ածանցական բառեր, եւայլն — յականիլ — «լաւ նայիլ», ականատես, ականաւոր, ակնածու, միականի, ակնահանոյ, խայտակն, ակնապիշ, ակնաբոյժ, ակնոց, եւայլն, եւայլն:

Ամէն մի ձեւի համար էլ ցոյց են տրուած մատենագրական աղբիւրները:

Ակն բառը, յայտնի է, իր հիմնական՝ աչք իմաստից դատ մեր լեզուում գործ է ածւում նաեւ մի քանի ուրիշ իմաստներով: Դրանք բոլորը եւս, վերոյիշեալ ձեւով, առաջ են բերուած ու բացատրուած, որով ակն բառի 2-րդ իմաստն է՝ «յոյս». ակն ունել — «յուսալ, ըսպասել». ակնկալութիւն, անակնկալ:

3. Ակն — «փոս, ծակ» — ակն ուռկանի, ակն տապարի, ակն գերեզմանի, որից՝ ակն բացել — «արտի մէջ փոսեր բանալ, ակնհատութիւն — (ամուսնութեան) «դաւաճանութիւն»: Նոյն այդ իմաստով ակն բառի փոխարէն ունելի գործածական է ական ձեւը — «փոս, ծակ», որից եւ՝ ական հատանել — «փոս փորել», «պատ ծակել», դրանից էլ՝ ականահատ, ականատ, եւայլն:

4. Ակն, նշ. է «աղբիւրի բխած տեղը, ջրի աչք», որից եւ — աղբերակն, ակնաղբիւր, ակնամէջ:

5. Ակն, նշ. է «որթի կամ ծառի աչք»:

6. Ակն — «խաչի թեւերի միջին կէտը»:

7. Ակն — գոհար, թանկագին քար, որից եւ՝ ականակապ — «գոհարազարդ», ակնաներպ, վանակն, ակնագործ:

8. Ակն, նշ. է «ծովի ժամակ»:

9. Ակն, նշ. է «չափ», օրինակ՝ «մէկ աչքով նայիլ»:

Կան անեւ նոյն ակն բառի օգնութեամբ կազմուած այլեւայլ դարձուածներ: Այս բոլոր հիմնական իմաստների բացատրութիւնը տալով մէկտեղ, հեղինակը մատնանշում է ամէն անգամ, ինչպէս ասուեց, այն աղբիւրը կամ աղբիւրները, ուսկից առել է նա մէջբերումը:

Այսքանով, սակայն, չէ բաւականանում բառարանագիրը: Նա առաջ է բերում նաեւ հնախօսական-լեզուաբանական կարեւոր բացատրութիւններ, համեմատութեան դնելով հայերէն ակն բառը համապատասխան բառերի եւ նրանց գործածութեանց հետ՝ օտար լեզուներում:

Դրանից պարզւում է, օրինակ, թէ ակն-ի նոյնիմաստ բառերը յունարէնում, զենտերէնում, պարսկերէնում եւ ուրիշ լեզուներում ի՞նչ առումներով են գործածական:

Այնուհետեւ յիշատակւում է, թէ ակն բառին սկզբնապէս ո՛ր լեզուաբանները (օտար եւ հայ) ի՞նչ ստուգաբանական բացատրութիւններ են տուել, դարձեալ յիշելով աղբիւրները — ոչ միայն առանձին հատորներով լոյս տեսած աշխատութիւններ, այլ եւ դիտական հանդէսներ:

Դարձեալ, Աճառեան մէկ-մէկ թւում է, թէ նոյն այդ բառը մեր ո՛ր գաբբառում ի՞նչ իմաստով է գործածւում, — պարզ ձեւով կամ բարդութեանց մէջ: Նախ առաջ են բերւում հին, ծանօթ իմաստներով գործածուած ձեւերը, իսկ յետոյ նաեւ այնպէսները, որ միայն դաւառական բարբառներում են գործածական՝ նոր առումներով: Ապա հետեւում են ակն արմատից կազմուած նոր բառերը մեր լեզուի մէջ: Վերջապէս բառարանից տեղեկանում ենք մենք, թէ ո՛ր դիտնականը եւ կամ հեղինակը ինքը, այս կամ այն լեզուով ակն-ին նոյնահնչիւն մի բառ «հայերէնից փոխառեալ է համարում»: Այսպէս, ըստ Աճառեանի, «հայերէնից դուռ փոխառութիւն է վրացերէն ականաթի բառը, որ նշանակում է՝ «թռչուն որսալու ցանց»:

Առնենք ազատ բառը: Ինչպէս վերը, այստեղ էլ բացատրուած ենք գտնում այդ բառի